# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«14» հոկտեմբերի 2025թ. № 198-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-044-0018-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.1027 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով և հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը, Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ-8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 259 Ա որոշումը, Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0018-0001 կադաստրային ծածկագրից առանձնացրած 0.1027 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ. Տ.

**2025թ. հոկտեմբերի 14**
**Գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberd.loriberdhamaynq2017@mail.ru

**ՈՐՈՇՈՒՄ**

« 16» հոկտեմբերի 2025թ. № 199-Ա

### ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂ ՈՒՌՈՒՏ 06-105-0018-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.10264 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եկատերինա Արտավազդի Պետրոսյանի /ծնված 16.08.1957թ. անձնագիր AL0373049, տրված 04.08.2023թ. 053-ի կողմից/ լիազորված անձ Քրիստինա Ռաֆայելի Պետրոսյանի /անձնագիր AT0406624, տրված 04.03.2020թ. 053-ի կողմից/ կողմից ներկայացված դիմումը, հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.05.1991թ. թիվ 4 որոշումից քաղվածքը, համայնքի ղեկավարի 15.08.2025թ. թիվ 158-Ա փոստային հասցե տրամադրելու մասին որոշումը, «ԱՐՏՅԱՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հաշվի առնելով որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ**

1. ՀՀ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Ուռուտ 06-105-0018-0023 կադաստրային ծածկագրում գտնվող, համաձայն հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.05.1991թ. թիվ 4 որոշումից քաղվածքի տրված 28.08.2025թ. 0.13 հա մակերեսով հողամասը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի փաստացի կազմում է 0.10264 հա, որի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Եկատերինա Արտավազդի Պետրոսյանի սեփականության իրավունքը:
2. Հաստատել՝ 06-105-0018-0023 կադաստրային ծածկագրի 0.10264 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային գոտիներում, չի

հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Համաձայն հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.05.1991թ. թիվ 4 որոշումից քաղվածքի տրված 28.08.20025թ. նշված ծածկագրի հողամասը սեփականաշնորհվել է Եկատերինա Արտավազդի Պետրոսյանին մեկ անձով:
5. Համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի, 07.10.2025թ. տրամադրված եզրակացության և համայնքապետարանի համապատասխան բաժնի կողմից կատարված տեղազննության կադաստրային քարտեզում նշված ծածկագրի հողամասում արտացոլված շինությունը քանդված է, ֆիզիկապես գոյություն չունի:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի միավորված մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ

Կատ.՝ Լ. Մամաջանյան
Հեռ՝ 098289292

**2025թ. հոկտեմբերի 16**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № 200-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի38-րդ հոդվածի1-ին մասի7-րդ, 8-րդ կետերի և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 25.12.2024թ. թիվ 80-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետի՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի 2025թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը.

06-03-01 դասակարգմամբ «ջրամատակարարում» նախահաշվի 5129 հոդվածով սահմանված 1.000.000 (մեկ միլիոն) դրամ գումարից 200.000 (երկու հարյուր հազար) դրամը տեղափոխել 5113 հոդված՝ այն սահմանելով 2.363.000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2025թ. հոկտեմբերի 16**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հոկտեմբերի 2025թ. № 201-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի 06-038-0005-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լեջան, 8-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 17 հողամաս փոստային հասցեն:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

Կատ.՝ Լ. Մամաջանյան
Հեռ.՝ 098289292

**2025թ. հոկտեմբերի 17**
**գ. Լոռի Բերդ**